

Հարցաթերթ
Աշխարհագրություն առարկայի դպրոցական օլիմպիադայի
առաջին (դպրոցական) փուլի – 2018թ.

/տևողությունը – 120 րոպե/

10 – րդ դասարան
Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Աշխարհագրության արդի խնդիրներից չէ (չեն).**
 1. երևույթների բացատրությունները,
 2. հայտնագործությունները և աշխարհի նկարագրությունը,
 3. երևույթների հետևանքների կանխատեսումները,
 4. երևույթների առաջացման պատճառների պարզաբանումները:
2. **Բնական աշխարհագրության համալիրային ճյուղերից է.**
 1. տարածաշրջանային աշխարհագրությունը,
 2. ռեկրեացիոն աշխարհագրությունը,
 3. հնէաաշխարհագրությունը,
 4. երկրաբնապահպանությունը:
3. **1 : 80 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի միջև եղած հեռավորությունը 8 սմ է: Դրանց միջև իրական հեռավորությունը կլինի.**
 1. 6,4 կմ
 2. 64 կմ
 3. 640 կմ
 4. 6400 կմ
4. **Քարտեզագրական ի՞նչ պրոյեկցիա գոյություն չունի.**
 1. արևադարձային
 2. հասարակածային
 3. կոնային
 4. ազիմուտային
5. **Ո՞ր դեպքում է ջերմաստիճանի տատանման լայնությունը մեծ.**
 1. գարնանը և աշնանը՝ պարզ եղանակներին,
 2. անտառածածկ շրջաններում,
 3. ձմռանը՝ ամպամած օրերին,
 4. ծովերի վրա
6. **Ո՞ր գուակցությունն է ճիշտ.**
 1. Հյուսիսային Ամերիկա – Յուկոն – Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
 2. Եվրասիա – Դանուբ – Խաղաղ օվկիանոս
 3. Աֆրիկա – Օրանժ – Հնդկական օվկիանոս
 4. Ավստրալիա – Մուրեյ – Հնդկական օվկիանոս
7. **Ընտրել «կրաքար, տորֆ, բնական գազ» շարքի օրինաչափությանը համապատասխանող ապարը.**
 1. կավ
 2. տուֆ
 3. ավազ
 4. քարածուխ
8. **Ի՞նչը բնորոշ չէ բարեխառն օդային զանգվածներին.**
 1. ձևավորվում են 40 – 70⁰ լայնություններում
 2. արկտիկական և արևադարձային օդի միախառնման արդյունք են
 3. առանձնանում են չորությամբ, բարձր ջերմությամբ և փոքր թափանցիկությամբ
 4. ծովային և ցամաքային տարատեսակները խիստ տարբեր են
9. **«Պետություն – պետական կառավարման ձև» գույգերից ընտրել ճիշտը.**
 1. Ճապոնիա – բացարձակ միապետություն
 2. Գերմանիա – նախագահական հանրապետություն
 3. ԱՄՆ – խորհրդարանական հանրապետություն
 4. Նիդերլանդներ – սահմանադրական միապետություն
10. **«Ժողովուրդ - կրոն» գույգերից ընտրել սխալը.**
 1. իսպանացիներ – քրիստոնեություն
 2. մոնղոլներ – բուդդայականություն
 3. պարսիկներ – մահմեդականություն
 4. ճապոնացիներ – կոնֆուցիականություն

11. Երկրի տրանսպորտային համակարգը ձևավորվում է.

1. տրանսպորտային միջոցներից
2. տրանսպորտային ձեռնարկություններից
3. տրանսպորտային ուղիներից
4. բոլոր վերը թվարկածներից

12. Ո՞ր պնդումն է սխալ.

1. Արաքսը սկիզբ է առնում Ծաղկանց լեռների սառնորակ աղբյուրներից:
2. Արաքսի ձախակողմյան վտակներից են Հրազդանը, Արփան, Ողջին:
3. Արաքսին անվանել են «կամուրջներ չհանդուրժող» գետ:
4. Արաքսը ստորին հոսանքում հոսում է դաշտավայրով:

13. Ռացիոնալ բնօգտագործման օրինակ է.

1. փայտանյութի փոխադրումը խոշոր գետերով
2. անտառների հատման միջոցով վարելահողերի ընդարձակումը
3. օգտակար հանածոների նոր հանքավայրերի շահագործումը
4. հումքի երկրորդային շահագործումը

14. Ո՞ր շարքում է ճիշտ հաջորդականությամբ ներկայացված սև մետաղաձուլության արտադրական փուլերը.

1. երկաթաքարի հարստացում – երկաթի հանքաքարի արդյունահանում–թուջի արտադրություն – պողպատի արտադրություն – գլանվաճքի արտադրություն:
2. երկաթի հանքաքարի արդյունահանում – երկաթաքարի հարստացում – պողպատի արտադրություն – թուջի արտադրություն – գլանվաճքի արտադրություն:
3. երկաթի հանքաքարի արդյունահանում – երկաթաքարի հարստացում – թուջի արտադրություն – պողպատի արտադրություն – գլանվաճքի արտադրություն:
4. երկաթի հանքաքարի արդյունահանում – երկաթաքարի հարստացում – գլանվաճքի արտադրություն – թուջի արտադրություն – պողպատի արտադրություն:

15. ԼՂՀ – ի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

1. մեկ շնչին բաժին ընկնող վարելահողերի մակերեսը մի քանի անգամ գերազանցում է ՀՀ համապատասխան ցուցանիշը:
2. գյուղատնտեսության առաջատար ճյուղերն են հացահատիկի մշակությունը և այգեգործությունը:
3. բազմամյա տնկարկները զբաղեցնում են շուրջ 46 հազ. հա տարածք:
4. կլիմայական պայմանների պատճառով խաղողագործությունը ԼՂՀ – ում ավելի աշխատատար է և քիչ շահութաբեր, քան ՀՀ – ում:

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Վայրի աշխարհագրական կորդինատներն են՝ հս. լ. 43° 30' և արլ. ե. 55° 10': Որոշել Արեգակի ճառագայթների անկման անկյունը դեկտեմբերի 22 – ին, կեսօրին:

17. Երկրի բնակչության թիվը 20 մլն է, գյուղական բնակչության թիվը՝ 8 մլն: Որոշել ուրբանիզացիայի մակարդակը:

18. Լեռան գագաթին մթնոլորտային ճնշումը 400 մմ է, օդի ջերմաստիճանը՝ -12° C, իսկ ստորոտին՝ +6° C : Որոշել մթնոլորտային ճնշումը լեռան ստորոտին (հաշվարկը կատարել 6° - ում):

19. Նավը գտնվում է հվ. լ. 32° 30' և արլ. ե. 60° – ի վրա: Որոշել նրա հեռավորությունը (կմ - ում) հարավային արևադարձից:

20. Երկրի երկաթուղային տրանսպորտով տարեկան փոխադրվում է 4 մլն տ բեռ, իսկ բեռնաշրջանառությունը կազմում է 960 մլն տ . կմ: Որքա՞ն է բեռների փոխադրման միջին հեռավորությունը: